Վարդիթեր ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆԻԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ (X-XIդդ.)

Երկրի վարչատարածքային բաժանումը պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանի հասարակական-տնտեսական հարաբերություններով: Ավատատիրական հասարակարգում ավատատիրական տիրույթը վերածվում է վարչական միավորի: Գավառներում և աշխարհներում տիրելով հողին սեփականատիրական իրավունքով ավատատերը դառնում է դրա լիակատար տերը: Ավատատեր իշխաններն իրենց տիրույթների սահմաններում գրեթե ինքնիշխան էին, նրանք էին վարում դրանց վարչական, ռազմական և դատաստանական գործերը:

Արաբական տիրապետության շրջանում, երբ Հայաստանը մտնում էր Արմինիա վարչական միավորի մեջ, ավատատիրական հասարակարգին բնորոշ մասնատվածությունը երկրում էլ ավելի էր խորացել, քանի որ այդ ճանապարհով արաբները կարողանում էին ամրապնդել իրենց տիրապետությունը: Մայորատը (ավագի ժառանգական իրավունքի գերակայությունը), որն սկսել էր ձևախեղվել դեռ Արշակունիների օրոք, արաբներն ավելի են խորացնում: Ձևավորվում են գահակալ և գահերեց իշխաններ: Գահերեցը ձևական իշխանություն ուներ գահակալի նկատմամբ: Ինչպես վկայում են արաբ հեղինակները՝ «Հայաստանի իշխանք նստած էին իրանց երկրներում եւ նոցանից ամեն մէկը կը պաշտպանէր իւր գաւառը. երբ այստեղ էր գալիս ամիրապետի ոստիկանն, նոքա կը ջանային նորա սէրը գրաւել եւ, եթէ նա նոցա հետ ազնիւ, բայց խիստ կը վարուէր, նոքա նորան հարկ կը վճարէին, հակառակ դէպքում՝ նորան հրապարակօրէն կը հայհոյէին եւ կարհամարհէին նորա հրամանն»:[1] Իսկ արաբ հեղինակ Տաբարին գրում է. «...բոլոր հայ իշխանները հսկում էին իրանց գաւառների ճանապարհների վրա»:[2] Յակուբ ալ-Համավիի բառարանում կարդում ենք. «Իբն Վաղիհ ալ-Իսպահանին, որը երկար ժամանակ մնացել է Արմինիայում, ասել է, որ իշխանությունների քանակով և տարածությամբ Արմինիայից ընդարձակ և կամ ավելի բարգավաճ երկիր չկա: Նա ասում է, թե իշխանությունների թիվն է 118»:[3]

Զարգացած ավատատիրության պայմաններում, երբ Հայաստանում պետության գլուխ կանգնեցին Բագրատունիները, դատական և հարկահանության («Պետական» իշխանության տարրերը) իրավունքը, առկա էր բոլոր իշխանների մոտ (չհաշված ազատներին՝ խոստակդարներին):[4] Այդպիսի ավատատերերն աղբյուրներում հանդես են գալիս հատուկ տերմիններով, որոնք ունեն սոցիալական և քաղաքական բովանդակություն: Դրանք «իշխան» և «տէր» տերմիններն են: Ուսումնասիրողները ցույց են տվել, որ «իշխան» բառով աղբյուրները նշում են այն ավատատերերին, որոնք իրենց սեփական տիրույթներում ունեին քաղաքական իշխանություն, իսկ «տէր» բառն արտահայտում էր տվյալ ավատատիրոջ հողային սեփականության իրավունքը:[5] Որոշ ավատատերերի հողային տիրույթներն ընդգրկում էին մի քանի գավառներ: IX-X դարերում իրենց հայտնի էին կողվածքներով և խաղացած դերով հայ իշխանական աներից Բագրատունիները, Արծրունիները, Սյունիները, Պահլավունիները (Կամսարականներ), Մոկաց, Խաչենի, Ուտիքի, Գարդմանի իշխանները: Ամենազորեղ ավատատերն այս շրջանում Բագրատունյաց արքայական տունն էր, որի տիրույթներն Անիի թագավորության տարածքի մեծ մասն էին կազմում: Դրանք էին՝ Այրարատյան աշխարհի

---

[1] *Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին. Բալազորի, հավաքեց և թարգմանեց Բագրատ Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 63:*

[2] *Նույն տեղում, էջ 95:*

[3] *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին. Յակուտ ալ-Համավի, կազմեց Հ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 18:*

[4] *Ս. Հ ա կ ո բ յ ա ն, Հայ գյուղացիության պատմություն, հ.2, Եր., 1964, էջ 54:*

[5] *Ռ. Մ ա թ ևո ս յ ա ն, Բագրատունյաց Հայաստանի պետական ու վարչական կարգը, Եր., 1990, էջ 47:*

Շիրակ, Արշարունիք, Բագրևանդ, Ճակատք, Կոգովիտ, Արագածոտն; Նիգ, Կոտայք, Աշոցք, ինչպես նաև Սյունյաց աշխարհի Գեղարքունիք գավառները:

Շիրակ և Արշարունիք գավառները սկզբնապես պատկանել են Կամսարական նախարարական տանը: 783թ. Կամսարականները, գտնվելով դժվարին կացության մեջ, տուիպված են լինում այդ գավառները զիջել Բագրատունիներին. «...վաճառելով անդարձօրէն զերկիր իւրեանց՝ զԱրշարունիս և զՇիրակ՝ տերանց Բագրատունեաց, որք յ՚Ը դարու սկսան պայծառանալ և նախաձեռնել 'ի Հայս»:[6] Բագրատունի Աշոտ Մտակերը. «զանձագին արար զգաւառս Արշարունեաց յազգէն Կամսարականաց, և զարքունիսն 'ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց»:[7] IXդ. II կեսից Շիրակը դառնում է Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի գլխավոր կենտրոն:

VIIIդ. Մամիկոնյաններից Բագրատունիներին է անցել նաև Բագրևանդ գավառը: Ինչպես Արշակունիների, այնպես էլ Բագրատունիների թագավորության օրոք արքունի տիրույթների մեջ է գտնվել Ճակատք գավառը: Ճակատք գավառի արքունի կալվածք լինելու մասին վկայում է Հովհաննես Սմբատի 1038թ. Հռոմոսի արձանագրությունը,[8] ըստ որի՝ թագավորը Հռոմոսի վանքին է նվիրում կալվածք Կողբում: XI դ. սկզբին Արշարունիքի, Ճակատքի և Այրարատի[9] եպիսկոպոս է հիշատակվում Անանիա եպիսկոպոսը,[10] ինչը ենթադրել է տալիս, որ հիշյալ գավառները կազմել են մեկ վարչական միավոր:

Արշակունիների անկման շրջանում Բագրատունիներին է անցել Կոգովիտ գավառը. «Ցաւուրց անտի ուրեմն Այրարաջին Սմբատայ մասն մի Կոգովտի սեպհականեցաւ իւրում տոհմի՝ Բագրատունեաց, որոյ յետոյ և ոստան իսկ եղեւ երկար դարս»:[11] Ինչպես նշվել է, IX դ. սկզբին Աշոտ Մտակերը, ձեռք բերելով Արշարունիքը, Դարիւնքից այնտեղ է տեղափոխում իր աթոռանիստը:[12] Եվ թեպետ Աշոտ Մտակերը «զարքունիսն 'ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց, այլ ոչ փոխեցաւ և պայազատութիւն երկրին, այլ թուի կրսեր զարմի միոյ Բագրատունեաց վիճակեալ, նաև յետոյ 'ի պատուել թագաւորութեամբ՝ աւագ զարմին. քանզի և 'ի վախճան Ժ դարու յիշատակագիր մատենի միոյ յամի 999, ասէ գտեալ գիրս ինչ «Ի Կոգովիտ գաւառի 'ի տանն Բագրատունեաց եպիսկոպոսարանի. յորում ժամանակի եպիսկոպոս նոցա էր Տէր Թադէոս»:[13] Xդ. սկզբին Գագիկ Արծրունին գրավում է Դարիւնք, Ուղեոյ բերդերը: 930թ. պարտության մատնելով Լաշքարիի զորքը, Գագիկը գեղինների մի մասն ուղարկում է Դարիւնք:[14] 1000թ. Կոգովիտն ու Ծաղկոտնը պատկանում էին Արուսաեկ Արծրունուն, որի մայրը Գագիկ Ա Բագրատունու քույրն էր և Սենեքերիմ Արծրունու կինը: Ըստ երևույթին, Կոգովիտը ժամանակին տրվել էր Գագիկ Արծրունու ազգականներից մեկին, և այնտեղ առաջացել էր առանձին փոքր իշխանություն, որի մասին հիշատակում է Կոստանդին Ծիրանածինը: Կոգովիտի, ինչպես նաև Անձևացիքի ու Սոկսի իշխանությունները Վասպուրականի թագավորության վասալ իշխանություններից էին Xդ. առաջին կեսին: Հետագայում Կոգովիտը մի քանի այլ գավառների հետ գրավվում է Բագրատունիների կողմից և վերածվում նրանց տիրույթի:

Արշակունիների անկման շրջանում Ծաղկոտն՝ գավառը նույնպես անցնում է Բագրատունիներին և ամենայն հավանականությամբ X և XI դդ. մտնում էր Կոգովիտի իշխանության մեջ: Այդ է պատճառը, որ Ծաղկոտնը առանձին չի հիշատակվում:

---

[6] *Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 1:*

[7] *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ստեփանոս Ասողիկ), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106:*

[8] *Վիմական սարեգիր, կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 21:*

[9] *Ենթադրվում է, որ Այրարատ գավառը Մասյացոտն գավառն է, կամ ուղղակի Արարատյան դաշտը:*

[10] *Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 116:*

[11] *Նույն տեղում, էջ 494:*

[12] *Ստեփանոս Ասողիկ, էջ 106:*

[13] *Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 495:*

[14] *Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի), Եր., 1895, էջ 468:*

Արաբական տիրապետության անկումից հետո Արագածոտնը մտնում է Բագրատունիների թագավորության տարածքի մեջ: 940-ական թվականների սկզբին «այր մի արաբացի ազգաւ...» Գողթնի և Նախճավանի վրայով ներխուժում է Արարատյան դաշտ, հասնում մինչև Դվին քաղաքը, հարկեր պահանջելով անգամ Արագածոտնից, որը Աբասի՝ Սմբատի որդու կալվածքների մի մասն էր:[15] IX-XI դդ. Ամբերդն Արագածոտն գավառով և այլ տարածքներ Բագրատունիներին ենթակա Պահլավունիների կալվածքն էր, պատկանում էր Վահրամ Պահլավունուն:

X դ. Բագրատունիներին է անցնում նաև Նիգ գավառը, որը դեռ IV դ. պատկանել է Գնթունի նախարարական տոհմին: Ինչպես հայտնի է Սմբատ II-ն գրավելով Տաշիրը, Վասակ և Աշոտ Գնթունի եղբայրներին կարգում է Տաշիրի վերակացու:[16] Սակայն եղբայրներն ապստամբում են Աշոտ Գ-ի դեմ: Ապստամբությունը ճնշվում է, իսկ Նիգ գավառը միացվում է Բագրատունիների տիրույթներին:[17] X դ. գավառը տրվում է Պահլավունիներին: Բագրատունիները Պահլավունիներին են տալիս նաև Կոտայք և Մազազ գավառները: Մազազը մինչև V դ. կազմել է Ուտռան գավառի բաղկացուցիչ մասը և մտել է արքունի կալվածքների մեջ: Արաբական տիրապետության թոթափումից և հայկական պետականության վերականգնումից հետո Պահլավունիներն իշխում են նաև Վարաժնունիքում:

Ամենայն հավանականությամբ Անիի թագավորության կազմում Աշոցքը Շիրակի հետ կազմել է մեկ վարչական միավոր: Այդ է պատճառը, որ գավառը մինչև XII դ. առանձին չի հիշատակվել:[18]

XII դ. սկզբում Բագրատունյաց ոստանին է միացվում նաև Գեղարքունիք գավառը:

Աղբյուրների համեստ տվյալներից երևում է, որ X դարի առաջին կեսին Բագրատունյաց ոստանում կային ինչպես թագավորի ընտանիքին, այնպես էլ Բագրատունիների մյուս ներկայացուցիչներին պատկանող հողեր: Բագրատունիների թագավորական տանը և նրա տարբեր ճյուղերին իրրև սեփական տիրույթ պատկանում էին մի շարք բնակավայրեր, ինչպես՝ Տեկորը, Մրենը, Բագարանը, Կողբը, Թալինը, Արուճը, Վաղարշապատը, Երերույքը, Նախճավանը (Անիի մոտ), Ալամնա գյուղը (Անիի մոտ), Մատաղաան, Կոշը, Ավանը և այլն: Այս վայրերում Բագրատունիներն ունեին այգիներ, արտեր, առուներ, ջրաղացներ, ձիթհաններ, քարավանատներ և վարում էին սեփական խոշոր տնտեսություն: Արքունական տիրույթները վարչական միավորներ էին, որտեղ կառավարում էին թագավորի նշանակած վերակացուները («հավատարիմը»): Աղբյուրներից երևում է, որ այդ պաշտոնը Հովհաննես-Սմբատի օրոք (1020-1041թթ.) տրված էր խոշոր ավատատեր Վեստ Սարգսին:Արիստակես Լաստիվերտցու հաղորդմամբ, Սարգիսը վարում էր Հովհաննես-Սմբատ թագավորի հոգաբարձուի պաշտոնը:[19] Պատմիչի խոսքերից երևում է, որ հոգաբարձուն հսկում է՝ թագավորի գանձարանը և բերդերը:[20]

Առանձին վարչական միավորներ էին ավատատիրական տիրույթները: Բացի իրենց գոյությունը պահպանած հին ավատատիրական տներից, բագրատունիների օրոք բարձրանում են նաև նորերը: Որպես հակակշիռ՝ Բագրատունիները հովանավորում են որոշ իշխանական տների, որոնք թագավորական իշխանության համար կլինեին հուսալի հենարան՝ ի հակադրություն հին անջատողական իշխանական տների: Այդ է պատճառը, որ Աշոտ Գ-ից սկսած հայ թագավորները սկսում են ազատների միջավայրից առաջ քաշել նոր իշխանական տներ: Աննշան դիրք ունեցող որոշ իշխանական տներ, օրինակ, Պահլավունիներն (Ապուղամրենք) ու մասամբ Ապիրատյանները, շուտով բարձր դիրքի են հասնում: Բագրատունիների վասալներն էին Պահլավունիները, Ապիրատյանները, Հավնունիները, Գնթունիները, Քաջբերունիները, Գաբեղյանները, Սևորդիները, Խաչենի, Սյունյաց, Արծրունի իշխանները: Ենթակա ավատատիրական իշխանություններն առանձին վարչաավատատիրական միավորներ էին: Ամենաընդարձակը Պահլավունիների տիրույթներն էին: Նրանք կալվածքներ ունեին Արա-

---

[15] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 466:*
[16] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1996, էջ 296:*
[17] *Նույն տեղում, էջ 317:*
[18] *Ղ. Ա լ ի շ ա ն, Այրարատ, էջ 128:*
[19] *«Հոգաբարձու»՝ խնամատար, վերակացու:*
[20] *Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ (այսուհետև՝ Լաստիվերտցի), Եր., 1963, էջ 54:*

գածոտն, Նիգ, Կոտայք, Մազազ, Վարաժնունիք գավառներում, որոնք մեջընդմեջ տարածվում էին Շիրակ գավառից մինչև Սևանա լճի ու Ազատ գետի ավազանը Փամբակի լեռներից մինչև Երասխ գետն ընկած տարածքում: Հետագայում Պահլավունիների մի ճյուղը, որի ներկայացուցիչներն էին Վասակ Հոլումը, նրա եղբայր Վահրամը (Գրիգոր Համզայի ճյուղ) Հովհաննես Սմբատի վասալներն էին: Պահլավունիների մյուս ճյուղը, որը սերում էր Հասանից, վասալիտետով կապված էր Աշոտ Դ-ի հետ: Այս ճյուղի ներկայացուցիչներն էին Հասանի որդի Ապիրատը և վերջինիս հաջորդները, այդ թվում Թարսեղ Ա Անեցին, Գրիգոր Ապիրատյանը և ուրիշներ[21]: Ավատատիրական տիրույթները կառավարվում էին տվյալ ավատատիրոջ արքունիքից: Վարչական պաշտոնավարությունը կատարում էին մանր ազնվականները, որոնք դրա դիմաց ցկյանս (պայմանական իրավունքով) հատուցվում էին հողաբաժիններով: Այսպիսով, յուրաքանչյուր իշխանի և նրանից վասալական կախվածության մեջ գտնվող իշխանների կալվածքները միասին կազմում էին մի վարչաքաղաքական միավոր՝ ավատական իշխանություն:

Անիի թագավորության սահմաններում առանձին վարչական միավորներ էին Վայոց ձորի, Խաչենի (Առանշահիկներ), Փառիսոսի (Սևորդիներ), Քթիշի, Կոգովտի իշխանությունները, Դվինի և Գողթնի ամիրայությունները: Քննարկվող ժամանակաշրջանում երկրի կառավարումն իրագործվում էր արքունիքից, որը բաղկացած էր Դիվանից կամ Պետական խորհրդից և արքունի գործակալություններից:

Հայոց թագավորության գլուխ կանգնած էր Բագրատունի թագավորը, որը տնօրինում էր երկրի տնտեսական ու քաղաքական կյանքը: Նրան էին ենթարկվում բոլոր իշխաններն ու եկեղեցին: Հողի նկատմամբ թագավորի գերագույն իրավունքը կրում էր ձևական բնույթ:

Հայաստանի շահնշահին ենթարկվում էին երկրի բոլոր ենթակա թագավորները: Պետության մեջ կառավարման համար գոյություն ունեին մի քանի գործակալություններ: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր գործունեության առանձին բնագավառը և գլխավորվում էր մի բարձրաստիճան պաշտոնյայի կողմից: Թագավորին էին ենթարկվում հետևյալ համապետական գործակալները՝ իշխանաց իշխան Հայոց, իշխան Հայոց, սպարապետ, մարզպան Հայոց, տէրանց տէր:[22] Իշխանաց իշխանը գլխավորում էր Հայաստանի բոլոր իշխաններին: Նրան էին ենթարկվում գավառապետ բերդապահ իշխաններն ու քաղաքապետները: Նա էր կառավարում երկրի հարկերի հավաքումը: Պատերազմի ժամանակ սպարապետի հետ նա գլխավորում էր հայոց զորքը:

Անիի թագավորության սպարապետը, որ սովորաբար կոչվել է «Հայոց սպարապետ», կատարում էր երկրի ռազմական ուժերի գերագույն հրամանատարի պաշտոնը: Պատերազմների ժամանակ նրան էին ենթարկվում ոչ միայն Անիի թագավորության, այլ նաև վերջինիս վասալ թագավորությունների (Վասպուրական, Կարս, Սյունիք, Տաշիր-Զորագետ) ու իշխանությունների (Վայոց ձոր, Խաչեն) զորքերը: Գլխավոր հրամանատարի պաշտոնով հանդես էին գալիս Անիի թագավորները:

X դ. երկրորդ կեսից մինչև XI դ. կեսերը զորձակալները մեծ մասամբ Պահլավունիների տոհմից էին: Աղբյուրներում հիշատակվում են սպարապետներ Վասակը (Հոլում)՝ Գագիկ Ա-ի օրոք, Վահրամ Պահլավունին (Հայոց իշխան՝ Գրիգորի որդի, 1042-1045թթ.):[23] Իշխանաց իշխան է հիշատակվում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին:[24] Նույն Վասակն ու Վահրամը մինչև սպարապետությունը եղել են իշխանաց իշխաններ:[25] Հայոց իշխաններն էին՝ Ապլխարիրը (976թ.), Գրիգոր Ապիրատը (XI դ. 20-ական թթ.):[26] Վասպուրականի թագավորության անկումից հետո (1021թ.) մարզպանության գործակալությունը նույնպես հանձնվեց Պահլավունիներին: 1029–1040թթ. ըն-

---

[21] *Մատթէոսի Ուռհայեցւոյ Պատմութիւն (այսուհետև՝ Մատթեոս Ուռհայեցի), Յերուսաղէմ, 1869, էջ 12, 253, 328:*

[22] *Վիմական տարեգիր, էջ 6:*

[23] *Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, էջ 13, 99:*

[24] *Վիմական տարեգիր, էջ 17:*

[25] *Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 63: Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 148: Վիմական տարեգիր, էջ 16, 17, 26:*

[26] *Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ, էջ 148:*

պես մարզպան արձանագրություններում հիշատակվում է Ապլխարիք Պահլավունին:[27] Ծառայության համար նրանք ստանում էին բաժիններ «Շիրակի տան» տիրություններում: Պահլավունիներին էր տրված Մարմաշենը, Բագնայրը,[28] Վեսա Սարգիսին՝ Խծկոնը,[29] Սուրմառին, որտեղ ունեին սեփական եկեղեցիներ, իսկ Ապուղամր մարզպանն այդպիսիք ուներ Անիում (Փրկչի, Ապուղամրենց):[30] Նրանք բնակվում էին Անիում, որտեղ գտնվում էր նաև արքունի ապարանքը: Նոր պաշտոններ էին քաղաքի ամիրան (քաղաքապետ) և մուհթասիբը (շահապետ),[31] որոնք հանդես են գալիս առևտրի և քաղաքների զարգացման հետևանքով: Բագրատունիների թագավորությունում չկար թագադիր ասպետի պաշտոն, թագադրությունը կատարում էր Հայոց կաթողիկոսը: Այլ զորձակալությունների մասին տեղեկություններ չեն պահպանվել:

ГОСУДАРСТВЕННЫЙ СТРОЙ И АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОЕ ДЕЛЕНИЕ АНИЙСКОГО ЦАРСТВА (X-XIвв.)

___ *Резюме* ___ ___ *В. Абрамян* ___

Административно-территориальное деление любой страны обусловлено общественно-экономическими отношениями данного периода. Во времена феодального строя феодальное владение превращалось в административную единицу. В своих владениях феодалы имели безграничную власть, правили административными, военными и судебными делами.

Кроме старых княжеских домов во время правления Багратидов появились и новые княжеские дома, среди которых выделялись Арцруни, Пахлавуни, Гнтуни, Каджберуни и другие. Все княжеские владения считались отдельными административными единицами.

---

[27] Ղ. Ա լ ի 2 ա ն, Շիրակ, էջ 53, 82, 84, 148: Վիմական տարեգիր, էջ 16, 19, 20, 21:
[28] Վիմական տարեգիր, էջ17: Ստեփանոս Ասողիկ, էջ 270:
[29] Նույն տեղում, էջ 18:
[30] Նույն տեղում, էջ 19:
[31] Նույն տեղում, էջ 27, 221: Դիվան հայ վիմագրության, պրակ 1, էջ 38: